2017

UNIBANK
ՏԱՐԵԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դուստր

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հայաստանյան բանկային համակարգի համախառն ակտիվները 2017թ.-ին կազմել են 4,329 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 6%-ով:Բանկերի ակտիվների աճի տեմպերն արտացոլում են վարկավորման ծավալների աճը: Համակարգի վարկային ներդրումների ընդհանուր ծավալը 2017թ.-ի արդյունքներով կազմել է ավելի քան 2,660 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով 3.4%-ով 2016թ.-ի նույն ցուցանիշի նկատմամբ:

Բանկերի պարտավորությունները հաշվետու տարում աճել են 6%-ով կազմելով 3,634 մլրդ ՀՀ դրամ: Համախառն ավանդների ծավալը 2017թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 2,553 մլրդ ՀՀ դրամ, ինչը 11%-ով կամ 249 մլրդ դրամով ավելի է 2016թ.-ի դեկտեմբերի ցուցանիշից:

ՀՀ բանկային համակարգի շահույթը 2016թ.-ին կազմել է 33.7 մլրդ ՀՀ դրամ:

Հաշվետու տարում տնտեսական աճը Հայաստանում կազմել է 7.5%, ՀՆԱ-ն՝ 5,569 մլրդ ՀՀ դրամ կամ 11,5 մլրդ ԱՄՆ դոլար: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 1 873 348 ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 1 696 960 ՀՀ դրամի դիմաց:

ՀՆԱ-ում բանկային ակտիվները 2017թ.-ի արդյունքներով կազմել են 78%, իսկ վարկային ներդրումները՝ 48%, նախորդ տարվա 81% – 51% դիմաց:

Ներածություն

Աճի միտումը /2009-2017թթ./

ԱԿՏԻՎՆԵՐ	ԿԱՊԻՏԱԼ	ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ
277%	211%	280%



2017 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

• • •

Մեսրոպ Հակոբյանին որպես Յունիբանկի Վարչության նախագահ նշանակումը և Դավիթ Փափավյանին Բանկի Խորհրդի կավմում ընդգրկումը:

• • •

Յունիբանկ ԲԲԸ-ն հայտարարեց իր բաժնետերերին բաժնետոմսերի տեսքով առաջին միջանկյալ շահութաբաժինների վճարման մասին՝ 4 348 հատ բաժնետոմսի դիմաց 420 բաժնետոմս հաշվարկով, որը համարժեք է 13% տարեկան եկամտաբերության:

• • •

Moody`s միջազգային վարկանիշային գործակալությունը բարձրացրել է Յունիբանկի դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների վարկանիշը մինչև B2, փոխելով հեռանկարը որպես «կայուն»: Բազային վարկային գնահատականը սահմանված է b3:

• • •

2017թ. վերջի դրությամբ Յունիբանկի սպասարկման ցանցը ներառում էր 46 մասնաճյուղ Հայաստանում և Արցախում: Տարվա ընթացքում հաճախորդային բազան ընդլայնվել է՝ հասնելով մոտ 370,000-ի:

• • •

CRM-համակարգի բազայի հիման վրա գործարկվել է հաճախորդների դիմումների ուսումնասիրման ժամանակակից համակարգ, որը թույլ է տալիս օպերատիվ և արդյունավետ կերպով արձագանքել հաճախորդների պահանջմունքներին:

• • •

Յունիբանկն առաջին բանկն է Հայաստանում, որը հաջողությամբ անցավ SWIFT վճարային համակարգի անվտանգության պահանջների ատեստավորումը:

• • •

Յունիբանկը հաջողությամբ անցավ քարտապանների տվյալների անվտանգության ստանդարտների պահանջներին համապատասխանության ամենամյա սերտիֆիկացիոն աուդիտը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Յունիբանկի դիրքը ՀՀ բանկային համակարգում

	Յունիբանկի դիրքը 31/12/17	Յունիբանկի դիրքը 31/12/16	Յունիբանկի մասնաբաժինը
Ակտիվներ	10	11	9.35%
Վարկեր	8	10	13.91%
Պարտավորություններ	10	11	11.16%
Պարտատոմսեր	8	5	13.75%
Կապիտալ	11	8	1.49%

Yuynib

2017 թվականի արդյունքներով Յունիբանկն ապահովել է հետևյալ ցուցանիշները

Ակտիվները (մլն ՀՀ դրամ)



Կապիտալը (մլն ՀՀ դրամ)



Պարտավորությունները (մլն ՀՀ դրամ)



ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Բանկի ընդհանուր վարկային ներդրումներն առ 31.12.2017թ. կազմել են ընդհանուր ակտիվների 67%-ը: Դրամային վարկային պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 53%-ը: Վարկավորման միջին տոկոսադրույքը կազմել է տարեկան 13.5%:
Բարելավվել է իրավիճակը ժամկետանց պարտավորությունների մասով, չաշխատող վարկերի մակարդակը 18%-ից նվազել է մինչև 16%-ի, տարվա ընթացքում իրականացված հետևյալ միջոցառումների արդյունքում՝ բիզնես գործընթացների ավտոմատացում, սքորինգային համակարգերի բարելավում, վերակառուցում, հետբերման աշխատանքների ակտիվացում, ՓՄՁ վարկավորման կենտրոնի և Անդերրայթինգի ուժեղացում, վարկավորման շուկայի սեգմենտավորում:

Բանկի վարկային պորտֆելի կառուցվածքը



Վարկային պորտֆելի արժութային կառուցվածքը

Ներգրավված միջոցների կառուցվածքը



- ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
- ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԽՈՐԴՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
- ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐ
- ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

Ժամկետային ավանդներ



- ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ
- ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ

Ժամկետային ավանդների պորտֆելը հաշվետու տարվա վերջում կազմել է 110.5 մլրդ դրամ: Վերջինիս կառուցվածքում գերակշռում են բնակչությունից ներգրավված միջոցները՝ 92.3 մլրդ դրամ կամ պորտֆելի 84%-ը:

Ցպահանջ ավանդները 2017թ. ընթացքում ավելացել են 4.7 մլրդ դրամով և կազմել են 17.9 մլրդ դրամ, որից 7 մլրդ դրամը՝ բաժին է ընկել իրավաբանական անձանց:

Ընդհանուր պարտավորությունների ֆոնդավորման արժեքը նվազել է 1.4%-ով:

Բովանդակություն

ՄԱՆՐԱԾԱԽ ԲԻԶՆԵՍ

Յունիբանկն արձանագրել է ցուցանիշների վգալի աճ ֆիզիկական անձ հաճախորդներին մատուցվող ծառայությունների բոլոր սեգմենտներում: Մանրածախ վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկային պորտֆելում կազմել է 51%, կամ 71.4 մլրդ դրամ:
2017թ. Յունիբանկի կողմից տրամադրված մանրածախ վարկերի ծավալը 34%-ով գերազանցել է 2016թ. արդյունքը՝ գլխավորապես վաճառքների մոդելի փոփոխման և պորտֆելի կառավարիչների խմբի ձևավորման շնորհիվ: Ապրանքների և կենցաղային տեխնիկայի ձեռքբերման վարկավորումը հաշվետու տարում նույնպես հանդիսանում էր Բանկի գերակա ուղղությունը: Արդյունքում՝ Յունիբանկը 29% մասնաբաժնով պահպանել է առաջատար դիրքը ապառիկ վարկավորման շուկայում:
2017թ. Բանկը վերահաստատել է հիփոթեքային վարկավորման պետական ծրագրերում ակտիվ մասնակցի կարգավիճակը: Հաշվետու տարում Յունիբանկի կողմից տրամադրվել է 4.4 մլրդ դրամի թվով 169 հիփոթեքային վարկ, որից 203 մլն դրամի թվով 21 վարկ տրամադրվել է «Ազգային հիփոթեքային ընկերության» ծրագրի, իսկ 168 մլն դրամի թվով 17 վարկ՝ «Բնակարան երիտասարդներին» ծրագրի շրջանակներում:
Սպառողական վարկերի գծով օնլայն հայտերի քանակը տարվա ընթացքում կազմել է 11.734 հատ՝ 5.1 մլրդ դրամ ընդհանուր գումարով, որից հաստատվել է թվով 3.860 վարկ՝ 1.2 մլրդ դրամ ընդհանուր գումարով:
Յունիբանկի ակտիվ քարտերի քանակը տարեվերջին կազմել է 170.000 հատ: Շրջանառության ծավալը սպասարկման կետերում գերազանցել է 39.5 մլրդ դրամը, որից 32 մլրդ դրամը՝ բանկոմատներով:
2017թ. մանրածախ վարկային պորտֆելի միջին կշռված անվանական տոկոսադրույքը կազմել է 16.8%, նվազելով 1.4 տոկոսային կետով, տոկոսային եկամուտները կազմել են 14.7 մլրդ դրամ (Բանկի տոկոսային եկամուտների 66%-ը):
Մանրածախ բիզնեսի գծով շահույթը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ ավելացել է 62%-ով:
Մանրածախ վարկավորման բարձր ցուցանիշները 2017 թվականին ապահովվել են հետևյալ
միջոցառումների շնորհիվ.

- POS վարկավորման գծով բանկը համագործակցել է ավելի քան 270 կազմակերպությունների հետ, որոնց հետ համագործակցության շրջանակներում Բանկն իր ծառայությունները ներկայացնում է ավելի քան 650 վաճառասրահներում:
- Ընդլայնվել է պրոմոկետերի ցանցը՝ հասնելով մինչև 74-ի, որոնց միջոցով տրամադրվել է 13.9 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարի:
- Ավելացել է ոսկու գրավով վարկեր տրամադրող մասնաճյուղերի քանակը՝ 14-ից հասնելով մինչև 18-ի
- ակտիվորեն գովազդվել է վարկային օնլայն հայտերի ընդունման հնարավորությունը: 2017թ-ին օնլայն ստացված հայտերի քանակը կազմել է 12 000, գումարը՝ 5.1 մլրդ. ՀՀ դրամ, որից հաստատվել է 1.2 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարով 3 900 վարկ:

Նորարար

Մանրածախ վարկեր (մլն ՀՀ դրամ)



ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍ

2017թ. Յունիբանկը՝ որպես ռազմավարական ուղղություն, շարունակել է աշխատանքները փոքր և միջին ձեռնարկությունների համար վարկային միջոցների հասանելիությունը բարձրացնելու ուղղությամբ:

Կորպորատիվ վարկավորման բիզնես մոդելում տեղի են ունեցել էական բարեփոխումներ, որոնց արդյունքում Բանկը կենտրոնացել է միկրո և փոքր բիզնեսի զարգացման, ինչպես նաև նիշային հաճախորդների համար նոր գործիքակազմի մշակման վրա, ավտոմատացրել է անգրավ միկրովարկերի տրամադրման գործընթացը՝ «Պրոտոբեյզ Լաբորատորիզ» ընկերության նորագույն CRM համակարգի ներդրմամբ:

Բիզնես վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկային պորտֆելում կազմել է 49%, կամ 69.5 մլրդ դրամ, որի 45%-ը կազմում են ՓՄՁ վարկերը: Բիզնես վարկերի պորտֆելի միջին կշռված անվանական տոկոսադրույքը 2017թ. նվազել է 1 տոկոսային կետով և կազմել է 12.3%, տոկոսային եկամուտը կազմել է 5.4 մլրդ դրամ (ընդհանուր տոկոսային եկամուտների 24%-ը):

Բիզնես վարկերի պորտֆելի կառուցվածքը 31.12.2017թ. դրությամբ



ՓՄՁ վարկավորման և առևտրի ֆինանսավորման համար ռեսուրսներ

Black Sea Trade & Development Bank · IFC International Finance Corporation WORLD BANK GROUP · European Investment Bank · kfw ENTWICKLUNGSBANK

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաստատված ռազմավարության շրջանակներում Յունիբանկը ձևավորել է 2018թ. առանցքային առաջնահերթությունները՝

- Մանրածախ բանկինգի, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկություններին մատուցվող ծառայությունների ծավալների մեծացում, բարձր եկամտաբերություն ապահովող սեգմենտների շեշտադրմամբ
- Բիզնես գործընթացների ավտոմատացում, դրանց արդյունավետության բարձրացում
- Պարտատոմսերի թողարկման ծրագրի ընդլայնում՝ Բանկի պարտավորությունների կառուցվածքում պարտատոմսերի տեսակարար կշռի մինչև 10% ավելացմամբ, արտասահմանյան շուկայում պարտատոմսերի գնանշում
- Ժամանակակից տեխնոլոգիաների և կառավարման մեթոդների ներդրում
- Հաճախորդների՝ Բանկի ծառայություններով բավարարվածության մակարդակի և լոյալության բարձրացում
- Ֆինանսական արդյունավետության ապահովում և բանկային համակարգում Յունիբանկի դիրքի բարելավում

Սպարտակուողվածություն

Ռազմավարական նպատակներ 2018-2020թթ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

2020թ.-ին մինչև 10 մլն ԱՄՆ դոլար շահույթի ապահովում

Բաժնետոմսերի շուկայական գնի աճ

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

POS վարկավորման շուկայական մասնաբաժնի ավելացում մինչև 40 %

Բիզնես վարկավորման շուկայական մասնաբաժնի ավելացում մինչև 7.5%

Ծառայությունների տեսականու ընդլայնում

ԲԻԶՆԵՍ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հաճախորդների սպասարկման որակի բարելավում

ՓՄՁ վարկավորման ավտոմատացում

Հեռահար բանկինգի վարգացում

ԱՆՁՆԱԿԱԶՄՆ ՈՒ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Անձանակազմի որակավորման բարձրացում

Անձանակազմի լոյալության բարձրացում

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կորպորատիվ կառավարման լավագույն ստանդարտների կիրառում

Լոյալ բաժնետերերի մեծ թիվի ձևավորում

ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԸ

• • •

Լրացուցիչ վարկային ռեսուրսների ներգրավման նպատակով 2017թ. Բանկը շարունակել է աշխատանքը առաջատար միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ: Շարունակվել է համագործակցությունը Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC), Առևտրի և զարգացման Սևծովյան բանկի (BSTDB), Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD), ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի, ինչպես նաև KfW գերմանական բանկի հետ:

• • •

Համագործակցություն է հաստատվել Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության հետ՝ փոքր և միջին ձեռնարկությունների արտահանմանը աջակցելու նպատակով,

• • •

Ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով նախատեսվում է «Women in business» ծրագրի շրջանակներում կնքել համաձայնագիր հանրահայտ միգազգային ֆինանսական կառույցներից մեկի հետ:

• • •

2017թ. Յունիբանկը թողարկեց և հաջողությամբ տեղաբաշխեց դրամային և դոլարային անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ համապատասխանաբար 10% և 5.75% տարեկան եկամտաբերությամբ, 24 և 36 ամիս ժամկետայնությամբ: Թողարկման ընդհանուր ծավալը կազմել է 250 մլն դրամ և 10 մլն ԱՄՆ դոլար: Պարտատոմսերը ցուցակված են NASDAQ OMX Armenia ֆոնդային բորսայում:

Բորսային շուկա

Nasdaq OMX Armenia

1 բաժնետոմսի արժեք

230 ՀՀ դրամ

Մարքեթ Մեյքեր(շուկա ստեղծող)

«Armenbrok»

Հաշվի օպերատոր

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ

Ուսումնական

ՄԵՐ ԹԻՄԸ
Բանկի Խորհուրդը

ԳԱԳԻԿ ԶԱՔԱՐՅԱՆ
Խորհրդի նախագահ

«Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի նախագահ, «Յունիստրիմ» ԲԲԸ-ի Տնօրենների խորհրդի նախագահ, Ռուսաստանի բանկերի միության խորհրդի անդամ, «Национальный Банковский Журнал» ամսագրի դիտող խորհրդի անդամ, Ֆինանսական պլանավորման ինստիտուտի պրեզիդիումի անդամ: Գագիկ Զաքարյանը տարբեր տարիներին արժանացել է ֆինանսական աշխարհի մի շարք առաջատար մրցանակների, այդ թվում՝ «Լավագույն բանկիր» տիտղոսին 2005 և 2007 թվականներին: 2006 թվականին «Բիզնեսի սոցիալական պատասխանատվություն» անվանակարգում ճանաչվել է «Տարվա մարդ», իսկ 2007 թվականին բանկի արդյունավետ կառավարման համար դարձել է ՌԴ Ազգային բանկային մրցանակաբաշխության մրցանակակիր: 2008թ.-ին Գագիկ Զաքարյանն արժանացել է մրցանակի լավագույն ռուսաստանյան ապրանքանիշ ստեղծելու համար: Ռուսաստանում կայացած ,Տարվա բանկ» ամենամյա մրցանակաբաշխությանը բանկային բիզնեսում ներդրած ավանդի համար ճանաչվել է «Տարվա բանկիր 2013»: Պարգևատրվել է Հայ եկեղեցու բարձրագույն՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով՝ ի գնահատություն ազգօգուտ և եկեղեցաշեն գործունեության: 2015 թվականին Գագիկ Զաքարյանը պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով: Արցախի Հանրապետությանը մատուցած ծառայությունների համար պարգևատրել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:

ԳԵՈՐԳԻ ՊԻՍԿՈՎ
Խորհրդի անդամ

«Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ, «Յունիստրիմ» ԲԲԸ-ի Տնօրենների խորհրդի անդամ, «Պրոտոբեյզ Լաբարատորիզ» ՍՊԸ-ի Տնօրենների խորհրդի նախագահ, Ֆինանսական պլանավորման ինստիտուտի հիմնադիր և նախագահ:
Իրականացրել է մի շարք հաջող ծրագրեր Ռուսաստանում և Մեծ Բրիտանիայում:
Տնտեսագիտական գիտությունների թեկնածու:
«Բանկային ոլորտում տարվա մենեջեր 2003», «Ֆինանսական օլիմպ 2009» մրցանակների դափնեկիր:

ԷԴՈՒԱՐԴ ԶԱՄԱՆՅԱՆ
Խորհրդի անդամ

«Յունիստրիմ» ԲԲԸ-ի Տնօրենների Խորհրդի անդամ, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ: Ունի մեծ աշխատանքային փորձ բանկային համակարգում, կբաղեցրել է ղեկավար պաշտոններ մի շարք խոշոր ֆինանսական հաստատություններում:

Բանկի Խորհուրդը

ՀՐԱՀԱՏ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Խորհրդի
անդամ

«Տրանսստրոյբանկ»-ի Տնօրենների Խորհրդի նախագահ, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի անդամ: Ունի աշխատանքային մեծ փորձ բանկային համակարգում: Պարգևատրվել է Ռուսաստանի բանկերի միության պատվոգրով՝ ռուսաստանյան բանկային համակարգում ունեցած ավանդի և բանկի հիմնադրման 20-ամյակի կապակցությամբ:

ԴԱՎԻԹ ՓԱՓԱԶՅԱՆ
Խորհրդի
անդամ

Կապիտալի անկախ կառավարման անկախ մասնագետ:

Բանկի Վարչությունը

ՄԵՍՐՈՊ ՀԱԿՈԲՅԱՆ
Վարչության նախագահ

Մեսրոպ Հակոբյանն աշխատում է Յունիբանկում 2004թ.-ից, ունի ավելի քան 15 տարվա արդյունավետ աշխատանքային փորձ ՀՀ բանկային համակարգում:

ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վարչության անդամ

Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության անդամ , «Յունիլիզինգ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ:
Տեխնիկական գիտությունների թեկնածու:
Բանկային համակարգում աշխատանքային փորձն ավելի քան 21 տարի:
Մասնակցել է մի շարք միջազգային ծրագրերի հաշվապահական հաշվառման և հարկային օրենսդրության գծով:

ԱՐԱՐԱՏ ԴՈՒԿԱՍՅԱՆ
Վարչության անդամ

Վարչության նախագահի առաջին տեղակալ: Ունի մեծ աշխատանքային փորձ բանկային համակարգում, կբաղեցրել է ղեկավար պաշտոններ Հայաստանի, Ուկրաինայի և Մալթայի մի շարք խոշոր բանկերում: 2009-2011 թվականներին ղեկավարել է Հայաստանի բանկերի միությունը:

ՕՎՍԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Վարչության անդամ

Վարչության նախագահի տեղակալ - Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման գծով տնօրեն, «Յունիբանկ» ԲԲԸ-ի Վարչության անդամ, «Յունիլիզինգ» ՓԲԸ-ի և «ՌԵՍՈ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ, ՀՀ բանկերի միությանը կից Ֆինանսական արբիտրաժի արբիտր:
ՀՀ բանկային համակարգում ակտիվ և արդյունավետ աշխատանքի համար պարգևատրվել է Հայաստանի բանկերի միության պատվոգրով:

Բանկի Վարչությունը

ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Վարչության անդամ

Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն:
Տնտեսագիտական գիտությունների թեկնածու:
Բանկային համակարգում աշխատանքային փորձն ավելի քան 15 տարի:

ԳՈՒՐԳԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Վարչության անդամ

Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն:
Մասնակցել է որակավորման բարձրացման մի շարք ծրագրերի, այդ թվում՝ USAID-ի և KfW բանկի:

ՏԻԳՐԱՆ ԲԱԴԱՆՅԱՆ
Վարչության անդամ

Ռիսկերի կառավարման տնօրեն, Ֆինանսաբանկային համակարգում աշխատանքային փորձն ավելի քան 23 տարի:

ՀԱՅԿ ՍՈՒՎԱՐՅԱՆ
Ներքին աուդիտի տնօրեն

Տնտեսագիտական գիտությունների թեկնածու:
Բանկային համակարգում աշխատանքային փորձն ավելի քան 13 տարի:

Պետքի կարգադրում

MOODY'S
INVESTORS SERVICE

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇ

ԹՂԹԱԿԻՑ ԲԱՆԿԵՐ

RIETUMU

UNISTREAM MONEY TRANSFERS

Raiffeisen Bank International

Alfa·Bank

BANK OF GEORGIA WEALTH

Moodys Investors Service միջազգային գործակալությունը բարձրացրել է Յունիբանկի վարկանիշը՝ սահմանելով B2 դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների համար: Բազային վարկային գնահատականը /baseline credit assessment (BCA)/սահմանվել է b3, իսկ կոնտրագենտի ռիսկի գնահատականը /longterm Counterparty Risk Assessment (CR Assessment)/՝ B2(cr)/NP(cr) մակարդակի վրա: Կանխատեսումը՝ կայուն:

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվություն հաճախորդների համար
+ 374 10 59 55 55
callcenter@unibank.am

Տեղեկատվություն բաժնետերերի համար
Ներդրողների և միջազգային կապմակերպությունների հետ
հարաբերությունների զարգացման վարչություն
+374 10 59 22 59
ir@unibank.am
m.hambardzumyan@unibank.am

Բանկի աշխատակազմ
+374 10 59 22 59
badoyan@unibank.am

Տեղեկատվություն ԶԼՄ-ների համար
Հասարակայնության հետ կապերի ծառայություն
+374 10 55 56 86
khachatryan@unibank.am

Բանկի գլխամասային գրասենյակի հասցե՝ 0025, ՀՀ, Երևան,
Չարենցի 12, N53, 1-5
+374 10 59 22 59, +374 10 59 55 55,
www.unibank.am | corp.unibank.am | prive.unibank.am

Աուդիտոր՝ Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, 0012, ք. Երևան,
Վաղարշ Վաղարշյան թ., 8/1տ.
Հեռ.՝ +374 10 26 09 64 32